ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՏԶՆՆ ԳՀԱՊՁԲ- 17/7-49-17

ք. Երևան «19» «07» 2017թ.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա. Շահնազարյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և **«Սմարթլայն» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Տ.Ղարիբյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված **գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի** (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **5077904** / հինգ միլիոն յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**«Սմարթլայն» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5	Հասցե ք.Երևան, Վարդանանց 110
Հ/Հ՝ 900013010013	<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ՝ 02505983	ՀՎՀՀ 01548908
/Ա.Շահնազարյան	Տ. Ղարիբյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
20 17 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՀՀ ՏՀՆՆ ԳՀԱՊՁԲ- 17/7 - 49 - 17 «15» 07

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
Չափ. համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դաս. (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	Արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	30197631	Թուղթ A4 ֆորմատի 1 /21x29.7/ **Pioneer**	Նավիգատոր Կոմփանի, Պորտուգալիա	A4, չկավճած էֆկալիպտե թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված: Խտությունը՝ առնվազն 80 գ/մ² (առանց շեղումների), չափերը՝ 21.0x29.7 մմ. (առանց շեղումների), առանց փայտային խեժի և գազանման քլորի պարունակության: Նախատեսված՝ միակողմանի և երկկողմանի տպագրության համար: Պիտանի՝ լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար: Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ: Պայծառությունը՝ 100%-ից ոչ պակաս, հաստությունը՝ 108մկմ, անթափանցելիությունը՝ 94%-ից ոչ պակաս, անհարթությունը ոչ ավել՝ 180մլ/ր՝, խոնավությունը՝ 3,5-4,5%, արխիվային պահպանման ժամկետ՝ ոչ պակաս քան 150 տարի, օդի անցանելիություն՝ 1700 մլ/ր, գործարանային փաթեթավորմամբ: Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների): Մեկ տուփի քաշը՝ 2,5 կգ, տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3%, ֆենոլի պարունակություն՝ ոչ ավել քան	տուփ	1750	3500000	2000	Մ.Մկրտչյան 5	2000	IV-րդ եռամսյակ

				0,001 մգ/մ³, ֆորմալդեգիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ³							
2	30199420	Թուղթ, նշումների համար, սոսնձվածքով **Tie Tlan**	ՉԺՀ	Թերթիկներ նշումների համար, սոսնձվածքով 90մմx90մմ, առնվազն 900էջ, 80գր. գունավոր,	հատ	900	414000	460	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	460	IV-րդ եռամսյակ
3	30199430	Թուղթ նշումների, տրցակներով **,JIA TE**	ՉԺՀ	Թուղթ նշումների համար, կպչուն, չափը՝ 76.2x76.2մմ տրցակում էջերի քանակը՝ 100 էջ	հատ	130	13000	100	Մ.Մկրտչյան 5	100	IV-րդ եռամսյակ
6	30199232	Ծրար, մեծ, A4 ձևաչափի համար	ԱՄԷ	Ծրար՝ A4 (210x297մմ) ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով, N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող:	հատ	32	86400	2700	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	2700	IV-րդ եռամսյակ
7	30197234	Թղթապանակ, կոշտ կամզով **AN PAI**	ՉԺՀ	Թղթապանակ ռեգիստր, երկօղականի, A4 ֆորմատի (210x297մմ) ձևաչափի թղթերի համար, ներսի մակերեսը լամինապատված, 4-8սմ հաստությամբ, գույնը՝ սև, կարմիր, կապույտ, պատվիրատուի ընտրությամբ,	հատ	545	163500	300	Մ.Մկրտչյան 5	300	IV-րդ եռամսյակ
8	30197231	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ **Impulse**	ՀՀ Ինպուլս-Ա ՓԲԸ	Թափանցիկ պոլիմերային թաղանթից, A4 (210x297մմ) ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու համար, 70 միկրոն, ամուր եզրերով, հարթ մակերեսով, փայլուն	հատ	13.5	189000	14000	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	14000	IV-րդ եռամսյակ
9	22811150	Նոթատետրեր **Paperline**	Հնդկաստան	Նոթատետր A4 ձևաչափի (210x297մմ), 50էջ, տողանի, առանձնացվող էջերով, գույնը՝ սպիտակ/դեղին,	հատ	300	30000	100	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	100	IV-րդ եռամսյակ
10	39263200	Գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով **Paperline**	Հնդկաստան	Գրասենյակային գիրք, 96 էջ /2QR/, տողանի, A5 ֆորմատ (148x210 մմ), ամուր կազմով, բարձր որակի	հատ	720	80640	112	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	112	IV-րդ եռամսյակ
11	30192114	Թանաք, կնիքի բարձիկի համար **Horse**	ՉԺՀ	Թանաք կնիքի բարձիկի համար, 40մլ, սրվակով, բարձր որակի,	հատ	145	2900	20	Մ.Մկրտչյան 5	20	IV-րդ եռամսյակ
12	30192121	Գրիչ գնդիկավոր **Cello Finegrip**	Հնդկաստան	Գրիչ գնդիկավոր, 0.6մմ ծայրով, ռետինե բռնակով, բարձր որակի, տարբեր գույների, պատվիրատուի ընտրությամբ,	հատ	65	26650	410	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	410	IV-րդ եռամսյակ
13	30192128	Գրիչ գելային **Aihao**	ՉԺՀ	Գրիչ գելային, 0,7 մմ ծայրով, տարբեր գույների, պատվիրատուի ընտրությամբ, բարձր որակի,	հատ	145	59450	410	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	410	IV-րդ եռամսյակ

14	30192128	Գրիչ գելային **Jet Stream/SX-210/**,	Ճապոնիա	Գրիչ գելային 1.0մմ, գույնը՝ կապույտ/սև, բարձր որակի:	հատ	1000	20000	20	Մ.Մկրտչյան 5	20	IV-րդ եռամսյակ
15	30192710	Սոսնձամատիտ, գրասենյակային **Fantastick**	Կորեա	Սոսինձ մատիտ, չոր, 15գր,	հատ	220	55000	250	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	250	IV-րդ եռամսյակ
16	30192720	Գծանշիչ **Flamingo**	ՉԺՀ	Մարկեր տեքստային, տարբեր գույնի, նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, բարձր որակի, շեղ ծայրով,:	հատ	148	51800	350	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	350	IV-րդ եռամսյակ
17	30192160	Շտրիխներ **Pointer**	ՉԺՀ	Ուղղիչ գրիչ, 10մլ,	հատ	165	24750	150	Մ.Մկրտչյան 5	150	IV-րդ եռամսյակ
18	39241210	Մկրատ, գրասենյակային	ՉԺՀ	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասսե բռնակով, 18 սմ երկարությամբ, չժանգոտող պողպատից:	հատ	190	3800	20	Մ.Մկրտչյան 5	20	IV-րդ եռամսյակ
19	39263410	Ամրակ, մետաղյա, փոքր **Ding Li (DL)**	ՉԺՀ	Փոքր գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ, տուփի մեջ 100 հատ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ,:	տուփ	90	40500	450	Մ.Մկրտչյան 5	450	IV-րդ եռամսյակ
20	39263420	Ամրակ, մետաղյա, մեծ **Ding Li (DL)**	ՉԺՀ	Մեծ, գրասենյակային ամրակներ, մետաղական, 50 մմ չափի թղթի տրցակներն ամրացնելու համար, տուփի մեջ 100 հատ:	տուփ	240	36000	150	Մ.Մկրտչյան 5	150	IV-րդ եռամսյակ
21	39263510	Սեղմակ փոքր, **Ding Li (DL)**	ՉԺՀ	Մետաղական, լայնությունը 19 մմ, 40-60 էջ ամրացնելու համար	հատ	12	1560	130	Մ.Մկրտչյան 5	130	IV-րդ եռամսյակ
22	39263520	Սեղմակ միջին **Ding Li (DL)**	ՉԺՀ	Մետաղական, լայնությունը 25 մմ, 60-90 էջ ամրացնելու համար,	հատ	18	4104	228	Մ.Մկրտչյան 5	228	IV-րդ եռամսյակ
24	30197322	Կարիչ, 20-50 թերթի համար **Kangaro**	ՉԺՀ	Գրասենյակային կարիչ 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար, ծակման խորությունը 110մմ, բարձր որակի, ,	հատ	850	51000	60	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	60	IV-րդ եռամսյակ
25	30197111	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր **Kangaro**	ՉԺՀ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր տուփերով՝ N 10, տուփի մեջ 1000 հատ,	տուփ	70	7000	100	Մ.Մկրտչյան 5	100	IV-րդ եռամսյակ

26	30197112	Կարիչի մետաղալարե կապեր, միջին **Kangaro**	ՉԺՀ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր տուփերով՝ N 24/6, տուփի մեջ 1000 հատ,	տուփ	110	13200	120	Մ.Մկրտչյան 5 Կառավարա կան տուն 3	120	IV-րդ եռամսյակ
27	30192210	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ	ՉԺՀ	Գլանափաթեթված ժապավեն 48մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 36մ, թափանցիկ, թղթե, սպիտակ:	հատ	300	24000	80	Մ.Մկրտչյան 5 Կառավարակ ան տուն 3	80	IV-րդ եռամսյակ
30	30192125	Մարկերներ **Skyglory**	ՉԺՀ	Տարբեր գույնի՝ նախատեսված գրատախտակի համար, նշումներ անելու համար,: (Գույները ըստ պատվիրատուի պահանջի)	հատ	180	900	5	Մ.Մկրտչյան 5	5	IV-րդ եռամսյակ
32	39241140	Դանակ՝ գրասենյակային, մետաղյա	ՉԺՀ	Դանակ, գրասենյակային, մետաղյա, սայրի լայնությունը 18մմ՝ թուղթ կտրելու համար,	հատ	130	3250	25	Կառավարակ ան տուն 3	25	IV-րդ եռամսյակ
35	30197233	Թղթապանակ՝ թելով, թղթե	ՀՀ	Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ տիպի, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ³, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ:	հատ	65	97500	1500	Կառավարակ ան տուն 3	1500	IV-րդ եռամսյակ
37	30237250	Համակարգիչների մաքրման պարագաներ **LAMIREL**	ՉԺՀ	Համակարգչի էկրանը մաքրելու խոնավ անձեռոցիկներ, տուփի մեջ 120 հատ, չափը՝ 140x170մ,	հատ	1950	78000	40	Կառավարակ ան տուն 3	40	IV-րդ եռամսյակ

Գ Ն Ո Ր Դ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՎՀՀ՝ 900013010013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

Ա.Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ
«Սմարթլայն» ՍՊԸ
Հասցե ք.Երևան, Վարդանանց 110
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
ՀՎՀ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«13» 08 2017 թ. կնքված
ՀՀ ՏՀՇՆ ԳՀԱՊՁԲ- 17/7 - 49 - 17 ծածկագրով պայմանագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
Չափ. համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տնտես ագ. դաս	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30197631	4261	Թուղթ A4 ֆորմատի 1 /21x29.7/	-	-	-	-	-	-	-	-	-	3500000	3500000	3500000	3500000
2	30199420	4261	Թուղթ, նշումների համար, սոսնձվածքով	-	-	-	-	-	-	-	-	-	414000	414000	414000	414000
3	30199430	4261	Թուղթ նշումների, տրցակներով	-	-	-	-	-	-	-	-	-	13000	13000	13000	13000
6	30199232	4261	Ծրար, մեծ, A4 ձևաչափի համար	-	-	-	-	-	-	-	-	-	86400	86400	86400	86400
7	30197234	4261	Թղթապանակ, կոշտ կամզով	-	-	-	-	-	-	-	-	-	163500	163500	163500	163500
8	30197231	4261	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայ	-	-	-	-	-	-	-	-	-	189000	189000	189000	189000
9	22811150	4261	Նոթատետրեր	-	-	-	-	-	-	-	-	-	30000	30000	30000	30000
10	39263200	4261	Գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով	-	-	-	-	-	-	-	-	-	80640	80640	80640	80640

11	30192114	4261	Թանաք, կնիքի բարձիկի համար	-	-	-	-	-	-	-	-	-	2900	2900	2900	2900
12	30192121	4261	Գրիչ, գնդիկավոր	-	-	-	-	-	-	-	-	-	26650	26650	26650	26650
13	30192128	4261	Գրիչ, գելային	-	-	-	-	-	-	-	-	-	59450	59450	59450	59450
14	30192128	4261	Գրիչ, գելային	-	-	-	-	-	-	-	-	-	20000	20000	20000	20000
15	30192710	4261	Սոսնձամատիտ, գրասենյակային	-	-	-	-	-	-	-	-	-	55000	55000	55000	55000
16	30192720	4261	Գծանշիչ	-	-	-	-	-	-	-	-	-	51800	51800	51800	51800
17	30192160	4261	Շտրիխներ	-	-	-	-	-	-	-	-	-	24750	24750	24750	24750
18	39241210	4261	Մկրատ, գրասենյակային	-	-	-	-	-	-	-	-	-	3800	3800	3800	3800
19	39263410	4261	Ամրակ, մետաղյա, փոքր	-	-	-	-	-	-	-	-	-	40500	40500	40500	40500
20	39263420	4261	Ամրակ, մետաղյա, մեծ	-	-	-	-	-	-	-	-	-	36000	36000	36000	36000
21	39263510	4261	Սեղմակ փոքր	-	-	-	-	-	-	-	-	-	1560	1560	1560	1560
22	39263520	4261	Սեղմակ միջին	-	-	-	-	-	-	-	-	-	4104	4104	4104	4104
24	30197322	4261	Կարիչ, 20-50 թերթի համար	-	-	-	-	-	-	-	-	-	51000	51000	51000	51000
25	30197111	4261	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	-	-	-	-	-	-	-	-	-	7000	7000	7000	7000
26	30197112	4261	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	-	-	-	-	-	-	-	-	-	13200	13200	13200	13200
27	30192210	4261	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ	-	-	-	-	-	-	-	-	-	24000	24000	24000	24000
30	30192125	4261	Մարկերներ	-	-	-	-	-	-	-	-	-	900	900	900	900
32	39241140	4261	Դանակ՝ գրասենյակային, մետաղյա	-	-	-	-	-	-	-	-	-	3250	3250	3250	3250
35	30197233	4261	Թղթապանակ՝ թելով, թղթե	-	-	-	-	-	-	-	-	-	97500	97500	97500	97500

37	30237250	4261	Համակարգիչների մաքրման պարագաներ	-	-	-	-	-	-	-	-	-	78000	78000	78000	78000
ԸՆԴԱՄԵՆԸ				-	-	-	-	-	-	-	-	-	**5077904**	**5077904**	**5077904**	**5077904**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5

Հ/Հ՝ 900013010013

ՀՀ ՖՆ աշխատակազմի

գործառնական վարչություն

ՀՎՀՀ՝ 02505983

/**Ա.Շահնազարյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Սմարթլայն» ՍՊԸ

Հասցե ք.Երևան, Վարդանանց 110

<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ

Հ/Հ 163007031509

ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«19» 04

ՀՀ ՏՋՆՆ ԳՀԱՊՁԲ- 17/7 – 49 - 17

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«19» 07 2017 թ. կնքված
ՀՀ ՏՀՆՆ ԳՀԱՊՁԲ-17/7 – 49 – 17 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N ___
պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն